ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում ծանրամարտի մարզադահլիճի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ- ԳՀԽԾՁԲ-21/15 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 27.10.2021թ թ-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/15 գնման պայմանագրում 2024 թվականի մարտի 28-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 07.03.2024թ. N 344-Ն որոշումը
Փոփոխության նկարագրություն	N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/15** պայմանագրի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը լրացնել նոր վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցով:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 6
27.10.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/15 գնման պայմանագրի

ք. Երևան 28 .03 .2024թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի մարտի 7-ի N 344-Ն որոշումը և ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում ծանրամարտի մարզադահլիճի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցման համար Կողմերի միջև 27.10.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/15 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի 2024 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի N 2 հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը բաղկացած են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ք. Երևան, հանրապետության հրապարակ	ք. Երևան, Կորյունի 19ա
կառավարական տուն 3	«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1150009355815863
աշխատակազմի գործառնական	ՀՎՀՀ 01528652
վարչություն	
Հ/Հ 900011034379	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Ա. Մկրտչյան	Ա. Վարդանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
27.10.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/15 գնման պայմանագրի
28. 03.2024թ. կնքված N 6 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Մինչև 2023թ. վճարված գումար	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540/127	ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում ծանրամատի մարզադահլիճի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	17 578 161	-	-	-	2 839 230	2 839 230	2 839 230	2 839 230	2 839 230	2 839 230	2 839 230	2 839 230	2 839 230	2 839 230

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011034379
ՀՎՀՀ 02565827

ԿԱՏԱՐՈՂ՝
«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ք. Երևան, Կորյունի 19ա
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652

Գլխավոր քարտուղար՝

(ստորագրություն) Ա. Մկրտչյան
Կ.Տ.

Տնօրեն՝

(ստորագրություն) Ա. Վարդանյան
Կ.Տ.